

**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Հաստատում եմ՝**

**Բանասիրության**

**և միջմշակութային**

**հաղորդակցության**

**ինստիտուտի տնօրեն**

**Ն.Բ. Տատկալո**

« 08 »

07

2024\_\_թ.

Ինստիտուտ՝ Բանասիրության և միջմշակութային հաղորդակցության

Ամբիոն՝ Լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության

*Հեղինակ՝ Էմմա Խաչատրյան*

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Դասընթաց՝ Արևելյան լեզու (արաբերեն)

Բակալավրի\մագիստրոս կրթական ծրագիր՝ Բակալավրի

Դասիչ մասնագիտություն՝ 023201.02.6  
հաղորդակցություն / անգլերեն լեզու/)

Միջմշակութային

## **Դասընթացի անտոսացիան**

### **Արևելյան լեզու**

#### ***Առարկայի նպատակը.***

- Օտար լեզվի գիտելիքները տվյալ մակարդակով կիրառելու կարողության ձևավորում և զարգացում հաղորդակցության և կրթական գործունեության նպատակով,
- տրամաբանորեն ճիշտ, հիմնավորված և հստակ բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություն,
- գիտելիքների ձևավորում և բառապաշարի ձեռք բերում միջմշակութային հաղորդակցության համար հետևյալ թեմաների շուրջ. անձը ներկայացնելը, ընտանիքի մասին, ճանապարհորդություն, մասնագիտություններ, ընկերոջը բնութագրելը, առօրյա գործունեություն, ծանոթություն արաբախալամական մշակույթին, ընդհանուր տեղեկություններ արաբական ումմայի մասին, ընդհանուր տեղեկություններ արաբական երկրների մասին, նախընտրություններ, հիվանդանոցում, համալսարանում, սենյակի կամ տան նկարագրություն, այցելություն մզկիթ:

#### ***Դասընթացի նպատակը և խնդիրները.***

- Ջարգացնել հաղորդակցական հմտությունները և ունակությունները՝ գործածելով ուսուցման չորս հիմնական տարրերը՝ ունկնդրումը, խոսելը, կարդալը, գրելը (الاستماع، التكلم، القراءة، الكتابة)،
- հարստացնել բառապաշարն ակտիվ և պասիվ թարգմանությունների միջոցով,
- զարգացնել արաբատառ տեղեկատվական աղբյուրներից օգտվելու ունակությունը,
- իրագործել ծրագրի գլխավոր նպատակը, այն է՝ գրական արաբերենը զարգացնելը:

#### ***Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.***

- Ունկնդրումը՝ որպես հաղորդակցության հմտություն զարգացնելու համար կիրառել ձայնագրություններ դասապրոցեսում. հաջորդիվ կատարել համապատասխան վարժություններ:

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

- Տվյալ լեզվով խոսելը՝ որպես հաղորդակցության հմտություն զարգացնելու համար դասապրոցեստում կիրառել քերականական կանոններ և բառապաշար, ինչն ուսանողին հարկավոր է տվյալ թեմայի շրջանակում խոսելու համար:
- Գրավոր խոսքը հասկանալու համար կիրառել վերոնշյալ քերականական կանոնները և բառապաշարը՝ ըստ թեմայի պահանջների:
- Գրավոր աշխատանքներ վարժությունների, թարգմանությունների, պրեզենտացիաների տեսքով:

***Դասընթացի օբյեկտը և առարկան.***

- Դասընթացի օբյեկտն ու առարկան ուսանողներին արաբերեն ուսուցանելն է, նրանց հմտություններ տալը A1-A2 մակարդակներում, որոնց շրջանակներում կկարողանան հաղորդակցվել գրավոր և բանավոր:

***Դասընթացի մուտքային պահանջները.***

Արաբերենի դասավանդումն սկսվում է հնչյունբանական, բառագիտական, քերականական տարրական գիտելիքների ուսուցանումից. ուսուցման ողջ ընթացքում համադրություն է կատարվում հայերենի, ինչպես նաև ռուսերենի, անգլերենի հետ: Մատուցվող նյութը ներառում է արաբական լեզվաբանության, ինչպես նաև արաբական մշակույթի ավանդույթների, արաբական գրականության հետ ծանոթացումը: Դասավանդման սկզբնական փուլում ամբողջապես յուրացվում է արաբերենի այբուբենը՝ համադրվելով հնչյունաբանական առանձնահատկությունների և արտասական դժվարությունների հաղթահարման, յուրացված որոշակի բառապաշարի օգտագործման, ուսումնասիրված քերականական նյութի պարզաբանման, կարդալու և գրելու կանոնների հետ:

***Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները.***

Դասընթացի յուրացման արդյունքն ապահովում է անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ համապատասխանելով ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

***Գիտելիքները՝***

1. Արաբերեն այբուբենի յուրացումը, տառերի հնչյունաբանական առանձնահատկությունները, արտասանական դժվարությունների հաղթահարումը, հնչերանգի ինքնատիպության պարզաբանումը, արաբական գրի տիրապետումը, լեզվական նշանների տարբերակումը,
2. սկսնակ մակարդակի քերականական կանոնների յուրացումը,
3. լեզվի տվյալ մակարդակի բառապաշարի ամրագրումը:

***• գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարողանալ ճիշտ արտաբերել արաբերեն հնչյունները, ճիշտ գրել տառերը, տարբերակել լեզվական նշանները,
2. կարողանալ ներկայացնել ծանոթ թեմայի շուրջ տեղեկություն գրավոր և բանավոր,
3. սկսնակ մակարդակի քերականական կանոնները (խոսքի մասերը, նախադասության անդամները),
4. կարողանալ ներկայացնել սեփական անձը, ներկայացնել ընտանիքի անդամներին և ընկերներին, ներկայացնել շրջապատի իրերը, անվանել մարմնի մասերը, հաշվել, հոլովել, խոնարհել և այլն:

***• ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Ձևաբանական և շարահյուսական օրենքներ,
2. սկսնակ մակարդակից դեպի միջին մակարդակ տանող բառապաշար:

***Կարողունակությունը (կոմպետենցիան)՝***

***• ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

1. Տվյալ մակարդակի շրջանակներում կարողանալ ինքնուրույն մտքեր արտահայտել գրավոր և բանավոր,
2. կարողանալ ինքնուրույն թարգմանել տեքստեր արաբերենից հայերեն և հայերենից արաբերեն (գրավոր և բանավոր):

***Դասավանդման եղանակները և մեթոդները***

Որպես սեմական լեզու՝ գրական արաբերենը դրսևորում է անվանման և ստորոգման բազմաթիվ առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք մեծապես պայմանավորված են լեզվի նկարագրման ձևավորված ավանդույթով, հետևապես կրում են վերջինիս անմիջական ազդեցությունը:

Արաբերենն ուսուցանելիս չափազանց կարևոր է օգտագործել տարբեր եղանակներ (համատեքստային ուսուցման եղանակը, խնդրի վրա հիմնված ուսուցման եղանակը, ծրագրի վրա հիմնված ուսուցման եղանակը): Արաբերենի ուսուցման եղանակների կատարելագործումը նախ և առաջ ենթադրում է ուսուցման այնպիսի ձևերի զարգացում, ինչպիսիք են հաղորդակցությունը, զրույցը, քննարկումը: Միևնույն ժամանակ ուսանողը սովորում է ինքնուրույն մտածել, գտնել և լուծել խնդիրներ, կանխատեսել տարբեր լուծումների արդյունքները:

***Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում***

Դասընթացը ներառված է «7»՝ ակադեմիական կրեդիտ (252 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 124 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2024-2025 ուսումնական տարվա 1-2 կիսամյակում:

*ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

<b>Ուսումնական աշխատանքի տեսակները</b>	<b>Ընդամենը, ակադ. ժամեր</b>	<b>I</b>	<b>II</b>
<b>1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝</b>	<b>252</b>	<b>108</b>	<b>144</b>
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	<b>124</b>	<b>56</b>	<b>68</b>
1.1.1. Դասախոսություններ			
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	<b>124</b>	<b>56</b>	<b>68</b>
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ			
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	<b>128</b>	<b>52</b>	<b>76</b>
1.2.1. Քննություններին նախապատրաստում			
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)			
1.2.2.1. Գրավոր աշխատանքներ	<b>8</b>	<b>4</b>	<b>4</b>
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ			
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)		<b>ստուգարք</b>	<b>ստուգարք</b>

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

<b>Առարկայի բաժինները և թեմաները</b>	<b>Ընդամենը</b>	<b>Դասախոսություններ</b>	<b>Գործնական / սեմինար պարապմունքներ</b>
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>
<b>Թեմա 1.</b> دور العربية في بين لغات العالم . الحروف الابجدية للغة العربية وحركاتها.	<b>4</b>		<b>4</b>
<b>Թեմա 2</b> . لفظ الحروف العربية .	<b>6</b>		<b>6</b>
<b>Թեմա 3.</b> تنوين الرفع، تنوين النصب، تنوين الجر. واخر . العلامات في العربية.	<b>4</b>		<b>4</b>

ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

Թեմա 4. اشكال كتابة الحروف العربية	6		6
Թեմա 5. اقسام الكلمات	4		4
Թեմա 6. معرف ومنكر، ال تعريف	6		6
Թեմա 7. مذکر ومؤنث	4		4
Թեմա 8. مفرد، مثنى، جمع	6		6
Թեմա 9. الرفع، النصب، الجر	4		4
Թեմա 10. الضمائر: ضمير الرفع . المتصلة، ضمير النصب المتصلة، ضمير الجر المتصلة. ضمائر الاشارة الى المكان، ضمائر الاشارة للقريب والبعيد. ضمائر الاستفهام .	6		6
Թեմա 11. الكلمات المبنية في الصرف.	4		4
Թեմա 12. الممنوع من الصرف	6		6
Թեմա 13. الاضافة: المضاف والمضاف اليه	4		4
Թեմա 14. الصفة (النعته)	6		6
Թեմա 15. الاعداد: الاعداد الاصلية . والترتيبية من 1 الى 10. الاعداد الترتيبية من 11 الى 19	4		4
Թեմա 16. صيغ اسماء الاختصاص والمتخصص . والالات والمكان .	6		6
Թեմա 17. الاسماء الخمسة	4		4
Թեմա 18. اسماء الجهات الست	6		6

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

Թեմա 19. الفعل	4		4
Թեմա 20. الماضي، المضارع، الامر..	6		6
Թեմա 21. المفعول به	4		4
Թեմա 22. المفعول فيه ظرف مكان، المفعول فيه ظرف زمان	4		4
Թեմա 23. حروف الجر . الجر والمجرور .	4		4
Թեմա 24. الالفاظ المبتدئة بهمزة الوصل	4		4
Թեմա 25. الجملة: الجملة الفعلية والجملة الاسمية	4		4
Թեմա 26. كان واخواتها: اسم كان وخبر كان	4		4
Թեմա 27. ان واخواته: اسم ان وخبر ان	4		4
<b>Ընդամենը</b>	<b>124</b>		<b>124</b>

***Դասընթացի թեմաների բովանդակությունը***

**Թեմա 1.**

***Արաբերենի տառերը և ձայնանիշները***

1. Արաբերենի այբուբենը բաղկացած է 28 տառից, որից 25-ը բաղաձայն է, 3-ը՝ ձայնավոր (أ، و، ي) Կան նաև վերոնշյալ երեք ձայնավորների կարճերը ( كسرة ، ضمة، فتحة): Կարճ ձայնավորները երկարների մոտավորապես կես տևողությունն ունեն (հայերենի ձայնավորների համեմատությամբ):
2. Արաբերենի տառերից 14-ը արևային տառեր են կոչվում ( ن ل ظ ط ض ص ش س ز ر ذ د ث ت ) , 14-ը՝ լուսնային ( ي ه و م ك ق ف غ ع خ ح ج ب ا ):



**Թեմա 2.**

***Տառերի հնչյունաբանությունը***

Արաբերեն տառերից տասնյոթը **ي ه ي غ ف ك ل م ن ه** աննշան տարբերությամբ արտասանվում են հայերեն համապատասխան հնչյունների նման:

**ذ** և **ث** հնչյուններն արտասանվում են լեզվի ծայրն առջևի, վերևի, ներքևի ատամների հպելով:

**ث**-ի համար **թ**-ի և **ս**-ի միջև շփական ձայն պիտի հանել, իսկ **ذ**-ի համար՝ **դ**-ի և **զ**-ի միջև:

**ح** տառը կոկորդային շնչական ուժեղ **հ**-ի հնչում ունի:

**ظ ض ص** տառերն էմֆատիկ, թավ արտասանություն ունեն:

**ع**-ը կոկորդային ուժեղ **ա**-ի հնչում ունի:

**ق**-ը թավ կոկորդային է, այն արտասանվում է լեզվի ետևի ծայրը քիմքին մոտեցնելով:

Վայնավորն անտասանվում է հայերեն **է**-ին և **ա**-ին մոտիկ, կամ հայկական որոշ բարբառների **ա**-ի նման: Հայերեն **ա**-ի նման է հնչում հետևյալ տառերից առաջ և հետո. **ض**

**ظ ع غ ق و ج ر ص**

Արաբերենում կան երեք կարճ ձայնանիշներ՝ ֆաթհա, դամմա, որոնք դրվում են տառի վրա, և քասրա, որը դրվում է տառի տակ:

**Թեմա 3.**

***Թանվիններ և այլ նշաններ***

Թանվինները վերոնշյալ երեք ձայնանիշներն են, որոնց ավելացվում է **ن** ձայնը: Դրանք թանվին ֆաթհան, թանվին դամման, (դրվում են գոյականների և ածականների վերջին տառի վրա), թանվին քասրան են (դրվում է տառի տակ): Դրանք բառին տալիս են անորոշ դեմք:

Մուքունը **سكون** դրվում է տառի վրա և նշանակում է ձայնանիշի բացակայություն:

Շադդան **شدة** կամ թաշդիդը **تشديد** դրվում է տառի վրա և ցույց է տալիս, որ տվյալ տառը պետք է երկու անգամ կարդացվի:

Համգան **همزة** թեթև կոկորդային **ա** ձայնն ունի, բառի սկզբում միշտ գործածվում է և տառի հետ և համաձայն իր ձայնանիշի գրվում է **ا**-ի վրա կամ տակ: Այն երկու տեսակի է՝

## *ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

անջատող համգա և միացնող համգա: Իսկ բառամիջում, երբ համգան ձայնանիշ ունի, ընդհանրապես գրվում է ձայնանիշին համապատասժան տառի վրա, որը համարվում է համգայի հենարանը: Բառավերջում համգան գրվում է առանձին:

Մադդա ձայնանշանը **مدة** դրվում է, երբ երկու ալիֆ իրար են հաջորդում, և նրանցից առաջինը համգա է կրում, համգան և ալիֆը սղվում են:

Ուսական **وصلة** ցույց է տալիս, որ բառին նախորդում է մի բառ, որն արտասանությամբ պիտի կապվի:

### **Թեմա 4.**

#### ***Արաբական տառերի միացումները***

Արաբերեն տառերի առանձնահատկություններից է նաև նրանց իրար միացումները, որոնք նույնն են ձեռագրում և տպագրում: Այդ պատճառով արաբերենում տառը չի տողադարձվում, այլ պետք է ամբողջությամբ դրվի նույն տողում:

Արաբերենի տառերիվ վեցը **اد ز و** աջ կողմի տառին միանում են, իսկ մնացած տառերը երկու կողմից էլ միանում են: Այսպիսով, արաբերեն տառերն ունեն հետևյալ չորս ձևերը.

- չմիացող կամ անկախ ձև,
- ձախ կողմից միացող ձև,
- ձախ և աջ կողմից միացող ձև,
- աջ կողմից միացող ձև:

### **Թեմա 5.**

#### ***Խոսքի մասեր***

Խոսքի մասերը երեքն են.

- անուն **اسم**
- բայ **فعل**
- բառ-մասնիկ **حرف**

Իսկ մնացած մասերը՝ գոյական, աժական, դերանուն, մակբայ և այլն, համաձայն իրենց քերականական առանձնահատկությունների մտնում են անուն կամ բառ-մասնիկ մասերի խմբերի մեջ:

**Թեմա 6.**

***Առում***

Արաբերենում կա երկու առում՝ անորոշ **مذكر** և որոշյալ **معرف** : Որոշյալ առման ցուցանիշը յա-ն է:

**Թեմա 7.**

***Սեռ***

Արաբերենում կա երկու սեռ՝ արական **مذكر** և իգական **مؤنث** :

Արական սեռին են պատկանում անձի և կենդանիների արու գոյականները: Իսկ իգականին են պատկանում անձի և կենդանիների իգական գոյականները:

Անշունչ էակների, իրերի և այլ անունների մի մասն արական են, մյուսը՝ իգական. դրանց սեռն իմանալու համար հարկ է դիմել բառարանի օգնությանը: Այդ անուններից արական սեռին են պատկանում.

- շնչավոր էակների մարմնի գույգ անդամների անունները,
- շատ քիչ բացառությամբ երկրների, քաղաքների, բնակավայրերի անունները և այլ տեղանուններ,
- ժողովուրդների և ցեղերի անունները,
- կողմերի, քամիների, դրախտի, դժողքի անունները,
- իրերի, անշունչ էակների անունների հոգնակիները՝ անկախ նրանց եզակիի սեռից:

Մեծամասամբ իգական սեռին են պատկանում **ي ة و ة** տառերով վերջացող բառերը:

Ածականն են արականի և վերածվում վերջավորության ավելացմամբ:

**افعل** ձևն ունեցող գույն և մարմնական թերություն նշանակող ածականներն իգականի են վերածվում **فعلاء** ձևով:

**Թեմա 8.**

***Թիվ***

Արաբերենում կա երեք թիվ՝ եզակի **مفرد**, երկակի **مثنى**, հոգնակի **جمع** :

### *ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

Երկակին կազմվում է եզակիի վրա ավելացնելով Օուղղական հոլովի և Շմնացյալ հոլովների համար:

Արաբերենում անունների հոգնակին ունի երկու ձև՝ կանոնավոր հոգնակի և անկանոն հոգնակի: Կանոնավոր հոգնակին իր հերթին երկու տեսակի է.

- արականի կանոնավոր հոգնակի, որը կազմվում է եզակիի վրա ավելացնելով **ون** ուղղական հոլովում և **ضمي**ուս հոլովներում,
- իգականի կանոնավոր հոգնակի, որը կազմվում է եզակիի վրա ավելացնելով **ات** ուղղական հոլովում, ինչը թանվին քասրա է ստանում մյուս հոլովներում:

Արականի կանոնավոր հոգնակիի են վերածվում հետևյալ անունները.

- արիեստ, զբաղմունք նշանակող գոյականները,
- մարդկանց որոշ հասուկ անուններ:

Իգականի կանոնավոր հոգնակիի են վերածվում որոշ փոփոխությամբ.

- **ծ**-ով վերջացող անունները. ընդ որում **ծ**-ն սղվում է:
- որոշ արական անուններ,
- օտար լեզուներից փոխ առնված բառերը,
- **ءا** վերջավորություն ունեցող անունները. **ءا** վերջավորությունը **و**-ի է փոխվում:

Անկանոն հոգնակին կազմվում է բառի եզակիի սկզբում, մեջտեղում կամ վերջում զանազան տառեր ավելացնելով կամ պակասեցնելով: Անկանոն հոգնակին ունի բազմաթիվ ձևեր, որոնցից շատ գործածական են հետևյալ կաղապարներով կազմվողները.

**فعل، فعال، فعول، فعلة، افعال، افعله، افعلاء، فعلائن، فعلى، فعلاء، فعائل، مفاعل، مفاعيل.**

#### **Թեմա 9.**

#### ***Հոլովներ***

Արաբերենում երեք հոլով կա. դրանք արտահայտվում են բառի վերջին տառի ձայնանիշների փոփոխմամբ: Հոլովելի բառերը կոչվում են **معرب**, իսկ չհոլովվողները՝ **مبني**. Հոլովներն են՝ ուղղական **رفع**, հայցական **نصب**, սեռական **جر**. սեռական հոլովն արաբերենում հաճախ տալիս է մակբայի իմաստ:

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

Ճ-ով Է-ով վերջավորվող բառերից բացի մնացած բոլոր բառերի հայցական հոլովի թանվինից հետո պետք է խավելացնել:

Մնացյալ հոլովները վերջավորվում են սեռական հոլովի նման, սակայն ընդունում են որոշ նախդիրներ. օրինակ, տրականը **б**կամ **д**, բացառականը՝ **м**, ներգործականը՝ **في** Երկակին և արականի կանոնավոր հոգնակին հայցական և սեռական հոլովներում ունեն նույն վերջավորությունը:

Հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցության մեջ երկակիով կամ արականի կանոնավոր հոգնակիով դրված հատկացյալի վերջին **о** տառը սղվում է:

**Թեմա 10.**

**Ղերանուն** ضمير

Սա արաբերենում ունի նույն հատկանիշները, ինչ ունի գոյականը և փոխարինում է նրան: Ղերանունները բաժանվում են տեսակների.

1. Անջատ անձնական ղերանուններ, որոնք նախադասության մեջ միշտ ենթակայի դիրքում են:
2. Կցական ղերանուններ, որոնք նախադասության մեջ փոխարինում են ուղիղ խնդրին, հատկացուցչին: Որոշ կցականներ ազդեցության հետևանքով փոխում են իրենց ներքին ձայնանշանը:
3. Ցուցական ղերանունները ցույց են տալիս մոտիկ և հեռու տարածոյության վրա գտնվող առարկաներ: Կան նաև տեղ ցույց տվող ցուցական ղերանուններ:
4. Հարցական ղերանուններ, որոնք տարբերվում են հարցական մասնիկներից. օրինակ, **من، ما،** սրանք հիմնականում դրվում են բայից առաջ:

**Թեմա 11.**

**Չհոլովվող անուններ**

Դ-ով և Կ-ով վերջացող բառերի հոլովներն անփոփոխ են:

## *ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

Կ-ով վերջացող բառերի ուղղականը և սեռականը նույնն են, իսկ հայցականը ֆաթհա ձայնանիշն է ընդունում. իսկ երբ բառն անորոշ է, ուղղականի և սեռականի Կ տառը հապավվում է:

Վերջում եզակի առաջին դեմքի ֆստացական դերանունն ունեցող բառն անփոփոխ է մնում, իսկ հոլովակերտ ձայնանիշները կորչում են:

### **Թեմա 12.**

#### ***Երկհոլով բառեր***

Երկհոլով բառերը չհոլովվող են կոչվում ممنوع من الصرف, որովհետև թանվին և քասրա չեն ընդունում. ընդ որում այդ բառերի սեռական հոլովը նման է հայցականին: Այդ ձևով են հոլովվում հետևյալ բառերը.

- օտար հատուկ անունները,
- իգական սեռի հատուկ անունները, ինչպես նաև օ-ով վերջավորվող արական հատուկ անուններն ու տեղանունները,
- ʾ-ով վերջացող հատուկ անունները,
- բարդ հատուկ անունները,
- դիմավոր բայի ձև ունեցող հատուկ անունները,
- فعل ձևով կազմված հատուկ անունները,
- افعل ձևով ածականները,
- فعلان ձևով այն ածականները, որոնց իգականը կազմվում է فعلى ձևով,
- իգական ى-ով և ء-ով վերջավորվող բառերը,
- անկանոն հոգնակիների հետևյալ ձևերը. مفاعل، فوعل، مفاعل և այլն:

### **Թեմա 13.**

#### ***Հատկացուցիչ-հատկացյալ الاضافة***

Արաբերենում հատկացուցիչը مضاف الیه սեռական հոլովով է դրվում և գալիս է հատկացյալից مضاف անմիջապես հետո: Հատկացյալը հոդ և թանվին չի ընդունում. հոդը գրվում է հատկացուցիչի վրա: Եթե հատկացուցիչը հատուկ անուն է, հոդ չի ստանում:

**Թեմա 14.**

***Ածական* الصفه**

1. Արաբերենում որակական ածականը միշտ գրվում է անունից հետո և նրա հետ համաձայնում է թվով, սեռով, հոլովով, ինչպես նաև անորոշ կամ որոշյալ լինելու պարագաներում:
2. Ածականն իգականի է վերածվում վերջում ճավելացնելով:
3. Իրերի և կենդանիների հոգնակիի ածականը լինում է եզակի իգական:
4. Տարբեր սեռի պատկանող մի քանի անունների ածականը լինում է արական:

**Թեմա 15.**

***Թվականներ* الاعداد**

Թվականները ցույց են տալիս առարկաների քանակը և դասային կարգը: Ուստի լինում են քանակական և դասական: Արաբերենում կան պարզ թվականներ՝ կազմված մեկ բառից (օրինակ՝ 11-19 քանակական և դասական թվականները) և բարդ թվականներ՝ կազմված երկու կամ ավելի պարզ թվականներից (օրինակ՝ 11-րդից 19-րդ դասական թվականները): Թվականները նախադասության մեջ լինում են ենթակայի, ստորոգյալի, խնդրի դիրքում:

**Թեմա 16.**

***Մասնագիտության, մասնագետի, գործիքների, տեղի անունների կաղապարները***

- Մասնագիտության անունը اسم الاختصاص կազմվում է فعالة բանաձևով:
- Մասնագետի անունը اسم المتخصص կազմվում է فعال բանաձևով:
- Գործիքների անունները اسماء الالات կազմվում են مفعلة, مفعول, مفعول բանաձևերով: Ժամանակակից արաբերենում ավանդույթ է դարձել فعالة բանաձևով գործիքի անվան կազմությունը:

*ԲՄԿ ՊՈԻՅ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

- Գործողության տեղ ցույց տվող անունները **اسماء المكان** կազմվում են **مفعول، مفعلة** անվանաձևերով:

**Թեմա 17.**

**“Հինգ անունները”** *الاسماء الخمسة*

*اب، اخ، حم، فو، نو*

Սրանք այն անուններն են, որոնք **اضافة**-ում որպես **مضاف** գործածվելիս վերականգնում են բառավերջի սղված ցտառը, որը սեռականում դառնում է **ي** , հայցականում՝ **ا**՝

**Թեմա 18.**

**Վեց կողմերի անունները կամ մակբայական նախադրություններ**

*اسماء الجهات الست*

*امام، خلف، وراء، فوق، تحت، جنب*

Սրանք հանդես գալով նախդիրների դերում՝ օգտագործվում են հայցական հոլովով: Ըստ այդմ էլ կարող են օգտագործվել նաև իսկական նախդիրների հետ:

**Թեմա 19.**

**فայ** *الفعل*

1. Արաբերենում բայը չունի անորոշ դերբայ. որպես այդպիսին գործածվում է բայի անցյալ կատարյալի եզակի արական երրորդ դեմքը:
2. Կազմության տեսակետից արաբերեն բայերը բաժանվում են երկու մասի՝ արմատական և ածանցյալ բայեր:
3. Արմատական բայերը լինում են եռարմատ կամ քառարմատ, որոնց վրա զանազան մասնիկներ ավելացնելով կազմվում են ածանցյալ բայեր:
4. Արաբերենի եռարմատ բայերն ունեն վեց լծորդություն՝ համաձայն արմատի երկրորդ տառի ձայնանիշի: Վեց լծորդություններն էլ անկանոն են, ուստի դրանք կարելի է իմանալ վարժությամբ կամ բառարանի միջոցով: Մի շարք բայեր կարող



*ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

են մի քանի լծորդությամբ խոնարհվել առանց իմաստի փոփոծության, իսկ որոշ բայեր տարբեր լծորդությամբ խոնարհվելով տարբեր իմաստ են արտահայտում:

**Թեմա 20.**

***Բայի ժամանակները***

Արաբերենում բայերը խոնարհման տեսակետից երեք ժամանակ ունեն՝ անցյալ *الماضي*, ներկա *المضارع*, հրամայական *الامر*: Մնացած ժամանակները և եղանակները կազմվում են վերոնշյալների առաջ նախադաս մասնիկներ և օժանդակ բայեր ավելացնելով:

Արաբերենում բոլոր լծորդությունների բայերը խոնարհվելիս միննույն վերջավորությունն ունեն: Ի տարբերություն մյուս լեզուների՝ արաբերենում բայերի խոնարհումը սկսվում է երրորդ դեմքից և վերջանում առաջին դեմքով:

Խոնարհման ընթացքում փոփոխության են ենթարկվում բայերի արմատի ձայնավոր տառերը և ձայնանիշները:

Արաբերենում բայերը լինում են անփոփոխ *مبني* և փոփոխական *معرب*: Անփոփոխ են անցյալն ու հրամայականը: Ներկան կարող է ենթարկվել երկու տեսական փոփոխության՝ կապված հայցականացման և ջազմավորման հետ:

**Թեմա 21.**

***Ուղիղ խնդիր*** *المفعول به*

Ուղիղ խնդրի դիրք առաջացնում են անցողականության նշանակություն արտահայտող բայական հիմքերը *افعال متعادية*

**Թեմա 22.**

***Տեղի/ժամանակի պարագա*** *المفعول فيه ظرف مكان، المفعول فيه ظرف زمان*

Տեղի/ժամանակի պարագայի շարահյուսական դիրքը՝ ի տարբերություն ուղիղ խնդրի, առավել ինքնուրույնություն ունի նախադասության կազմում՝ իմաստաբանական առումով ավելի թույլ կախված լինելով ստորոգյալի դիրքում

*ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

արտահայտվող գործողության նշանակությունից, քանի որ դիրքի իմաստային գործառույթը՝ գործողության կատարման տարածական և ժամանակային պարագաների նկարագրությունն է, ինչը, բնականաբար, անմիջականորեն կապված չէ կատարվող գործողության բնույթի հետ:

**Թեմա 23.**

**Նախադրություն** *حروف الجر*

Արաբերենում կան բազմաթիվ նախադրություններ, որոնցից ամենագործածականներն են. *منذ، حتى، ل، في، ب، الى، عن، من، في، الى، على* և այլն:

Արաբերենում նախդիրները դրվում են անունից առաջ և այն վեր են ածում սեռական հոլովի:

**Թեմա 24.**

**Միացման համգեով ութ բառերը**

ال، اثنتان اثتان، امرأة، امرؤ، ابنة، ابن، اسم،

Մրանք, չունենալով բառակցքում անջատման համգա, խոսքի ընթացքում *وصلة*-ի միջոցով կապակցվում են նախորդող բաց վանկի հետ:

**Թեմա 25.**

**Նախադասություն** *الجملة*

Եթե արաբերենում նախադասությունն սկսվում է բայով, կոչվում է բայական նախադասություն. նրա ստորոգյալը կոչվում է *فعل*, իսկ ենթական՝ *فاعل*. Բացի բայական նախադասությունից *الجملة الفعلية*, արաբերենում կա նաև անվանական նախադասություն *الجملة الاسمية*, որը բաղկացած է ենթակայից և ստորոգյալից՝ այն տարբերությամբ, որ արաբերենում էական բայը ենթատեքստից է հասկացվում, այլ կերպ ասած՝ լռելյան է հասկացվում, օրինակ՝ *الكتاب كبير* Գիրքը մեծ (է):

### *ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

Անվանական նախադասության ենթական **مبتدأ** և ստորոգյալը **خبر** դրվում են ուղղական հոլովով: Ստորոգելի կարող են լինել անունը, ածականը, նախադրությունն իր խնդրով կամ ամբողջ մի նախադասություն: Ենթական պետք է ստորոգյալից առաջ դրվի, բայց որոշ պարագաներում նախադասությունը կարող է նաև ստորոգելիով սկսվել:

#### **Թեմա 26.**

*كان واخواتها* **ն և նմանները** *كان-ն*

Արաբերենում մի շարք բայեր կան, որոնք կոչվում են պակասավոր բայեր **ناقصه افعال**։ Այդ բայերից է, օրինակ, **ليس** բայը: Այս բայերը՝ որպես օժանդակ բայեր, առհասարակ գործածվում են անվանական նախադասության հետ, ընդ որում, ենթական մնում է ուղղական հոլովով, իսկ ստորոգելին դառնում է հայցականացված: Այսպիսի նախադասության ենթական կոչվում է **اسم كان**, իսկ ստորոգելին՝ **خبر كان**։

#### **Թեմա 27.**

*ان واخواتها* **ն և նմանները** *ان-ն*

Արաբերենում կան բառ-մասնիկներ, որոնք նույնպես գործածվում են անվանական նախադասության հետ՝ դրվելով նախադասության սկզբում: Դրանք ենթական վեր են ախում հայցական հոլովի, իսկ ստորոգելին մնում է ուղղական: Դրանցից է *ان-ն*: Նման մասնիկներ ունեցող նախադասության ենթական կոչվում է **اسم ان**, իսկ ստորոգելին՝ **خبر ان**։

#### **Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ**

1. *Кузьмин С.А., Учебник арабского языка. Для первого года обучения. -М.: Издательская фирма "Восточная литература" РАН, 2001. -383 с).*
2. *Островский Б.Я. Учебник арабского языка. М., 2017г*
3. *Степанов Р.В., Кузьмин В.А. - Арабский язык: начальный курс: учеб. пособие Издательство "ФЛИНТА" - 2019 - 64с.*
4. *ابراهيم رفاه، العربية،تهران، 1428 للهجرة*

*ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան*

5. Арабско-русский словарь. В двух томах. Под редакцией Баранова Х.К. М.2002г.
6. Արաբերեն-հայերեն բառարան, Ս.Ս. Սարգսյան և ուրիշներ, Բեյրութ, 1997